

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԵՐ ԵՎ ԻՐԵՐ

ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՍՅԱՆ

Ահա այդպես էլ նրանք ապրում էին իրենցից մշտապես խույս տվող իրականության մեջ, բառի միջոցով նրանց հաջողվում էր այն պահել մի կարճ ակնթարթ, բայց այն պիտի անխուսափելիորեն ու վերջնականապես անհետանար, հենց որ մոռացվեր տառերի նշանակությունը:

Գաբրիել Գարսիա Մարկես

Իրականության որևէ հատվածի լեզվական ներկայացումն իրականացնելու համար առաջադրվում և լուծվում են որոշակի խնդիրներ՝ նախ՝ իրադրության բաղադրիչների նշանակում՝ դրանց կապակցումով իրադրության լեզվական պատկերումը տալու դիտավորությամբ, ապա՝ կազմված կառույցի և նրա բաղադրիչների արտալեզվական հարաբերակիցների որոշարկում: Բաղադրիչների առանձնացումը իրարական է և ամբողջապես կախված է հենց այդ խոսքը կազմողի նախընտրությունից. միննույն իրադրության մեջ տարբեր խոսողներ և միևնույն խոսողը մեկ այլ դեպքում կարող են բոլորովին այլ տրոհում կատարել¹, բայց ինչպիսին էլ որ այդ տրոհումը լինի, իրադրության բաղադրիչները, հաճախ նաև նրանց հարաբերությունները նշանակվում են բառերով, ընդ որում հարաբերությունը բառով նշանակվելուն պես ինքն էլ իրադրության բաղադրիչի կարգավիճակ է ստանում: Նախադասության մեջ իրադրության լեզվական պատկերը բառերի միջոցով կազմելուց հետո անհրաժեշտ է դառնում նախադասության և նրա բաղադրիչների արտալեզվական վերաբերությունն ապահովելը: Դա հնարավոր է անել տարածաժամանակային տեղայնացումով և անվանական անհատականացումով: Բառերը գործուն մասնակցություն ունեն ոչ միայն անհատական անուններ տալու, այլև հաղորդակցման մասնակիցներին և խոսքի ժամանակային ու տարածական կողմնորո-

¹ Ինչպես որ շախմատի դաշտում արդեն իսկ եղած գծերով հնարավոր է երկու հարյուր չորս քառակուսի ցույց տալ, թեև որպես կանոն՝ բոլորը խոսում են դրանցից միայն վաթսուներսի՝ ամենափոքրերի մասին, լավագույն դեպքում նկատի են ունենում նաև վաթսուներեքերը՝ ամենամեծը:

շիչները նշանակելու մեջ: Այդ խնդիրներից առաջինի լուծումը միայն բառերի իրավասությունն է, երկրորդը լուծվում է ոչ միայն բառերով, այլև քերականական միջոցներով, բայց երբեք՝ առանց բառերի: Այդ ընդհանուր ռազմավարական խնդիրներին և նրանց լուծման եղանակներին համապատասխան բառերի մեջ առանձնանում են իմաստագործառական խմբեր՝ ընդհանրական անվանումներ, հատուկ անուններ՝ նեղ իմաստով², և ցուցական բառեր: Որպես կանոն՝ այս բառատեսակները ներկայացվում են պարզ թվարկման ձևով՝ առանց հատուկ հիմնավորման, թե ինչու և ինչպես են առանձնացվում հենց դրանք, ինչու դրանց փոխարեն կամ դրանց կողքին չէին կարող լինել ուրիշները: Մինչդեռ դրանց դիտարկումը և վերլուծությունը ցույց են տալիս, որ դրանք հստակ համակարգ են կազմում, որում ամեն մի երկու տեսակը որոշակի հատկանիշով հակադրվում է երրորդին: Դրանցից ամեն մեկը իրողությունները բառերով նշանակելու հիմնական ռազմավարական սկզբունքներից մեկի մարմնավորումն է և ունի միայն իրեն բնորոշ առանձնահատկություններ: Երբ քննարկվում են խոսքում նշվող իրողությունների անհատականացման և նույնականացման միջոցները, դրանք դարձյալ այս երեք խմբերին են համապատասխանում³: Բառերի կամ նրանց միջոցով խոսքում կատարվող մասնավորման այս տեսակների շարքին այլ տեսակ կամ տեսակներ ավելացնելու փորձերը կա՛մ երեք հիմնական տեսակներից մեկը ենթատեսակների մասնատելու արդյունք են⁴, կա՛մ հենց հեղինակի կողմից վերապահումով են արվում⁵, կա՛մ այդպես էլ մնում են չհիմնավորված և առնվազն տարակուսելի⁶:

Ըստ նշանակման առարկայի՝ ընդունված է տարբերակել ընդհանուր և մասնավոր բովանդակություններ ունեցող բառեր: Տրամաբանության մեջ հաստատված այս բաժանումը լեզվաբանության մեջ սահմանափակվում է գոյականների մեջ հասարակ և հատուկ անունների տարբերակումով. պատճառն այն է, որ հատուկ միայն գոյականներն են լինում, մյուս խոսքի մասերում այս տարբերակման անհրաժեշտությունը կամ հնարավորությունը չկա⁷, և հավուր պատշաճի առանձ-

² Բուն հատուկ անունները՝ տեղանունները, անձնանունները, կենդանիների անունները: Իսկ վերնագրերը, բնութագրող մականունները և նման այլ բառերը ընդհանրական անվանումներ են, որոնք ամրակայվում են որպես մասնավոր դեպքերի անուններ:

³ Տե՛ս, օր., **Стросон П. Ф.** О референции // Новое в зарубежной лингвистике. XIII. М.: Радуга, 1982, էջ 55, **Аругюнова Н. Д.** Лингвистические проблемы референции // Новое в зарубежной лингвистике. Вып. XIII, էջ 18, **Падучева Е. В.** Высказывание и его соотнесенность с действительностью. М.: Наука, 1985, էջ 10:

⁴ Տե՛ս **Бозций.** Комментарий к Порфирию // **Бозций.** «Утешение философией» и другие трактаты. М.: Наука, 1990, էջ 73:

⁵ Տե՛ս **Searle J. R.** Speech Acts: An Essay in the Philosophy of Language. Cambridge: Cambridge University Press, 1969, էջ 81:

⁶ Տե՛ս «Общее языкознание. Внутренняя структура языка». М.: Наука, 1972, էջ 446-448:

⁷ Ծայրահեղ դեպքում միայն երկու «հատուկ դերանուն» կարելի էր առանձնաց-

նացվող բազմություններից մեկը դատարկ էր լինելու: Բառերի մյուս էական դասակարգումը հիմնվում է նշանակման եղանակի վրա. բառերն իրողությունը անվանում են նրա հատկանիշների հիման վրա կամ մատնանշում են որևէ հարաբերության հիման վրա: Անվանելու ունակությունը վաղուց ի վեր ընդհանրապես բառի բնութագրիչ առանձնահատկությունն է համարվել: Մակայն բոլոր բառերի անվանողական դերի նկատմամբ հավատը խախտվում է, երբ ուշադրության են արժանանում ցուցական բառերը: Գուցե և այդ է պատճառը, որ լեզվի հատկապես տրամաբանական ուսումնասիրություններում հաճախ նախապատվությունը սկսում են տալ ավելի ընդհանուր և չեզոք «նույնականացում» հասկացությանը⁸. այդ դեպքում անվանումը և մատնանշումը դիտվում են որպես նույնականացման երկու եղանակներ, իսկ նրանց համապատասխանող բառերը՝ երկու բառատեսակներ: Արտաքուստ բավականաչափ տարբեր լինելով հանդերձ՝ անվանումն ու մատնանշումը նաև խորքային ընդհանրություն ունեն, և նրանցից յուրաքանչյուրը ինչ-որ չափով մյուսի դերն էլ է կատարում: Մի կողմից՝ անվանումը սահմանազատում է անվանման օբյեկտը և դրանով իսկ մատնանշում է այն⁹, մյուս կողմից՝ լեզվական մատնանշումն արվում է՝ համապատասխան հարաբերությունն անվանելով: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ զուտ անվանում կամ զուտ մատնանշում չի կատարվում, այլ անվանումով մատնանշում կամ մատնանշումով անվանում¹⁰:

Այս երկու դասակարգումների համադրումով են ստացվում բառերի հիշյալ երեք մեծ խմբերը:

Հատուկ և հասարակ անունների տարբերակումը հին պատմություն ունի: Քրիստոսի համար դրանց տարբերությունն այնաստիճան

նել՝ *ես* և *դու*: *Ես*-ը այն անունն է, որը մենք միշտ կրում ենք նախանձախնդրաբար՝ երբեք չգիջելով այն ուրիշի (միայն Հռոմի կայսրերը, Ֆրանսիայի թագավորներն ու գիտական աշխատությունների հեղինակներն են հայտնի որպես այդ անունից հրաժարվողներ, ասում են առաջինները անհամեստությունից, վերջինները՝ համեստությունից), նույն կերպ էլ *դու*-ն այն անունն է, որով մեզ համար կարող է օժտված լինել ուրիշներից միայն մեկը: Այդ անունների յուրահատկությունն այն է, որ մենք դրանց մասին հիշում ենք միայն խոսելիս:

⁸ Տե՛ս և, օր., **Стросон П. Ф.** Идентифицирующая референция и истинностное значение // Новое в зарубежной лингвистике. Вып. XIII, էջ 109-133, **Searle J. R.**, նշվ. աշխ., էջ 85-94, **Аругюнова Н. Д.**, նշվ. աշխ., էջ 21-23:

⁹ Հմմտ. «Անվան հին շումերական գաղափարագիրը սլաք է» (**Бибихин В. В.** Внутренняя форма слова. СПб.: Наука, 2008, էջ 87):

¹⁰ Լեզվի խորհրդանշային և ցուցական դաշտերի տարբերակումն առաջ քաշած Կ. Բյուլերը նույնպես խոսում է «ցուցական անվանման» և «անվանողական ցուցականության» մասին (տե՛ս **Бюлер К.** Теория языка. М.: Прогресс, 1993, էջ 76), սակայն դրանք երկուսն էլ դիտարկում է ցուցական բառերի շրջանակում՝ համարելով երկու տարբեր կարգի ցուցական բառերի հատկանիշներ: Մինչդեռ իրականում դրանցից մեկը՝ անվանող, մյուսը մատնանշող բառերին է հատուկ: Այսպես կոչված «դերցուցականը» (տե՛ս նույն տեղը, էջ 133-135) կարողանում է այդպիսի գործառույթ կատարել այն բանի շնորհիվ, որ անվանողական ցուցականությամբ օժտված են բոլոր անվանողական բառերը:

սկզբունքային էր, որ նա դրանք տարբեր խոսքի մասեր էր համարում¹¹: Դիոնիսիոս Թրակացին, լինելով ալեքսանդրացի քերական, չէր կարող տուրք տալ այդ ստոիկյան նորամուծությանը (առանց այն էլ առնվազն մակբայի հարցում զիջում էր արվել), և հասարակ ու հատուկ անունները վերամիավորվում են անուն խոսքի մասի մեջ, այս անգամ՝ անդարձ և անսասան: Վաղ միջնադարի փիլիսոփաներն անդրադառնում են հատուկ և հասարակ անունների տարբերությանը, բայց միայն նրա համար, որ հատուկ անունը փիլիսոփայի հետաքրքրություններից դուրս գտնվող հոչակեն¹²: Այս կողմնորոշմանը հավատարիմ են մնում ուշ միջնադարի գործիչները. ռեալիզմի և նոմինալիզմի՝ այս ամբողջ դարաշրջանի փիլիսոփայության դիմագիծը որոշող հակամարտությունը, կարելի է ասել, բանավեճ է (բանավեճ՝ համեմված հալածանքներով, արտաքսումներով, հրկիզումներով) միայն հասարակ անունների իմաստի տարբեր մեկնաբանումների կողմնակիցների միջև: Հատուկ անունները հաստատուն կերպով փիլիսոփայական քննության դաշտ են վերադարձվում անունների ծագման վերաբերյալ Ջ. Լոկի և Գ. Վ. Լայբնիցի հայտնի բանավեճից հետո: Իսկ XIX դարի վերջերից դրանք դառնում են լեզվի տրամաբանական վերլուծության անխուսափելի բաղադրամասը:

Եթե բառերի միջև իմաստային տարբերություններ կան, ապա դրանք պիտի դրսևորված լինեն նրանց բովանդակության շերտերից որևէ մեկում՝ նշանակյալում (հասկացական բովանդակության մեջ), նշյալում կամ վերաբերյալում¹³:

Երբեմն հատուկ անունների տարբերակիչ է համարվում հասկացական բովանդակության բացակայությունը¹⁴: Մակայն «Ես վճռակա՛նորեն ոչինչ չգիտեմ տվյալ մարդու մասին, եթե գիտեմ միայն, որ նրա անունը Յակոբ է»¹⁵ կարգի պնդումը ներքուստ հակասական է. ես չեմ կարող միաժամանակ պնդել, որ ես տվյալ մարդու մասին մի բան գի-

¹¹ Տե՛ս «Фрагменты ранних стоиков». Т. II. Ч. 1, М.: «Греко-латинский кабинет» Ю. А. Шичалина, 1999, էջ 77:

¹² Տե՛ս **Դավիթ Անհաղթ**, Պորփյուրի «Ներածության» վերլուծությունը // **Դավիթ Անհաղթ**, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1980, էջ 133, **Իոանն Դամասկոս**. Источники знания. М.: Индрик, 2002, էջ 60:

¹³ Ջ. Ս. Միլի գործածած (տե՛ս **Милль Дж. С.** Система логики силлогистической и индуктивной. М.: ЛЕНАНД, 2011, էջ 80-88) և Բ. Ռասելի հանրայնացրած (տե՛ս **Рассел Б.** Об обозначении // **Рассел Б.** Избранные труды. Новосибирск: Сиб. унив. изд-во, 2009, էջ 18-32) «նշում (denotation)»-ի հիման վրա կազմված «նշյալ» և Չ. Ք. Օգդենի ու Ա. Ա. Ռիչարդսի «վերաբերյալ (referent)» (**Ogden C. K., Richards I. A.** The Meaning of Meaning. N. Y.: Harcourt, Brace & World, 1964, էջ 9-12) տերմինները տարբեր տեսություններում երբեմն գործածվում են միևնույն իմաստով՝ ընտրվելով ըստ հեղինակի նախասիրության, սակայն ընդունելին դրանց տարբերակված գործածումն է. «նշյալ»-ը՝ լեզվական միավորով նշանակման ենթակա իրողությունների համար, «վերաբերյալ»-ը՝ լեզվական միավորի խոսքային կիրառության իրադրական որոշակի հարաբերակցի համար:

¹⁴ Տե՛ս, օր., **Милль Дж. С.**, նշվ. աշխ., էջ 81-83:

¹⁵ **Маркс К.** Капитал. Т. I. М.: Политиздат, 1983, էջ 97:

տեմ, և որ ես նրա մասին բացարձակապես ոչինչ չգիտեմ: Բացի դրանից՝ չէ՞ որ ես գրեթե ոչինչ չգիտեմ նաև, ասենք, նեյտրինոյի մասին, եթե գիտեմ միայն, որ նրա անունը «նեյտրինո» է. ես, ինչպես որ Յակոբի դեպքում, գիտեմ միայն նրա անունը: Այնպես որ անվանակրի նույնականացման համար իրողության մասին գիտելիքի առկայությունն անհրաժեշտ է բոլոր դեպքերում¹⁶: Հետևաբար հատուկ անուններն ընդամենը պիտակներ չեն¹⁷, դրանք ակնարկում են որոշ անհատական առանձնահատկություններ¹⁸, կարող են «համառոտ նկարագրումներ (դեկրիպցիաներ)» համարվել¹⁹. Լեզվաբանության մեջ պնդում է արվում անգամ հատուկ անունների բովանդակային ավելի մեծ հարստության մասին²⁰, տրամաբանության մեջ առաջ է քաշվում անհատային հասկացության գաղափարը²¹: Այսպիսով՝ հատուկ և հասարակ անունների տարբերակման հիմունքը նշանակյալի մեջ չէ:

Բառի նշյալի մեջ ընդգրկված իրողությունների օբյեկտիվ բնույթի հիման վրա արվող դասակարգումները լեզվաբանական արժեք ունեն, երբ կապված են նաև քերականական օրինաչափությունների հետ. այդպես է հատկապես դասային լեզուներում, մասամբ էլ այլ լեզուների այնպիսի բառախմբերում, որոնք յուրահատուկ քերականական հատկանիշներ ունեն և այդպիսով բառաքերականական հիմունքով են առանձնացվում: Մնացած դեպքերում այդպիսի դասակարգումները²² ըստ էության գիտելիք են տալիս ոչ թե բառերի, այլ իրականության մասին և առավելագույնը կարող են նպաստել բառարանագրական աշխատանքին՝ օգտագործվելով, ասենք, թեգաուրուսներ կազմելիս:

Հատուկ անունները և ընդհանրական բառերը հաճախ տարբե-

¹⁶ Հմմտ. «... վերաբերությունները հաստատվում են (անհրաժեշտաբար) համաձայնահեն լեզվական կանոնների կիրառման արդյունքում» (**Лебедев М. В., Черняк А. З.** *Онтологические проблемы референции*. М.: Практис, 2001, էլեկտրոնային տարբերակ. http://www.studmed.ru/lebedev-mv-chernyak-az-ontologicheskije-problemy-referencii_e30e6660bb8.html#, էջ 102):

¹⁷ Տե՛ս **Крипке С.** *Тождество и необходимость // Новое в зарубежной лингвистике*. Вып. XIII, էջ 346-347:

¹⁸ Տե՛ս **Кацнельсон С. Д.** *Содержание слова, значение и обозначение // Кацнельсон С. Д.* *Общее и типологическое языкознание*. Л.: Наука, 1986, էջ 12-14:

¹⁹ Տե՛ս **Рассел Б.** *Философия логического атомизма // Рассел Б.* *Избранные труды*, էջ 142-144:

²⁰ Տե՛ս **Есперсен О.** *Философия грамматики*. М.: Изд-во иностр. лит-ры, 1958, էջ 71-72: Այս պնդումը, որքան էլ առաջին հայացքից արտառոց լինի, կարող է հիմնավորվել տրամաբանորեն՝ հասկացության ծավալի և բովանդակության հակադարձ համեմատականության կանոնով. ծավալի փոքրացումը պիտի ուղեկցվի բովանդակության մեջ ավելի մեծ թվով հատկանիշներ ներառելով:

²¹ Տե՛ս **Карнап Р.** *Значение и необходимость*. М.: Изд-во иностр. лит-ры, 1959, էջ 82: Ուշագրավ է, որ Գ. Ա. Բրուտյանը հասկացության սահմանման և բնութագրման մեջ, ի տարբերություն տրամաբանական ձեռնարկներում սովորաբար հանդիպող ձևակերպման, առարկաների դասից բացի, հետևողականորեն նշում է նաև մեկ առարկան (տե՛ս **Գ. Ա. Բրուտյան**, *Ձևական տրամաբանության դասընթաց*, Եր., Լույս, 1967, էջ 59):

²² Տե՛ս, օր., **Степанов Ю. С.** *Имена, предикаты, предложения (Семиологическая грамматика)*. М.: Наука, 1981, էջ 46-48, 71-85:

րակվում են նշյալի կազմում եղած իրողությունների ընդհանրացվածության աստիճանով՝ եզակի առարկա և դաս: Այն դեպքերը, երբ դասի (որը կարող է սահմանվել որոշակի հատկանիշներով) կազմում միայն մեկ առարկա կա, մնում են դասային անվանումների շրջանակում, քանի որ առարկայի եզակիությունը տեսականորեն պարտադրված չէ և ընդամենը փաստական բնույթ ունի (ինչպես կասեր Ու. Վ. Օ. Քուայնը, «ցավագնորեն փորձնային է»²³): Այդ դեպքերը ցույց են տալիս, որ ընտրված տարբերակիչ հատկանիշը, որքան էլ գործուն լինի, բացարձակ չէ. այն կարող է չեզոքանալ (ստացվում է, որ մեկ առարկա պարունակող դասը թույլ դիրք է առարկայի և դասի հակադրության մեջ): Բացի դրանից՝ մինևույն ընդհանրական անվանումը կարող է օգտագործվել և՛ դասի, և՛ նրա որևէ ներկայացուցչի նշանակման համար, հետևաբար նրա բովանդակության մեջ այդ երկու իմաստները համատեղվում են, և անհնար է դրանք սահմանազատել առանց խոսքային վերաբերության հաշվառման: Լավագույն դեպքում պետք է ասել, որ ընդհանրական անվանումը կարող է նշանակել թե՛ մեկ առարկա, թե՛ մի ամբողջ դաս, մինչդեռ հատուկ անունը միշտ մեկ առարկա է նշանակում, ընդ որում եթե առաջին դեպքում առարկան ներկայացվում է որպես դասի ներկայացուցիչներից մեկը, ապա երկրորդ դեպքում՝ որպես մի ամբողջ ուրույն դաս:

Դիտարկվող բառատեսակների համեմատության տեսանկյունից ավելի հեռանկարային է նշյալի և վերաբերյալի քանակային համեմատությունը: Ընդ որում մեկ տարր պարունակող բազմության հետ կապված հիշյալ խոչընդոտից խուսափելու համար նախընտրելի են գերիշխումային-դիտավորային բնութագրումները. էական է, թե անունը հատկապես ինչ նպատակով է ստեղծվում, առաջին հերթին ինչին է ծառայում, որքան էլ որ մի տեսակն ունակ լինի ինչ-որ դեպքում մյուսի գործառույթն իրականացնելու: Հատուկ անունները ստեղծվում են մեկ առարկա անվանելու համար, և այդ մեկով սահմանափակվում են նրանց և՛ նշյալը, և՛ վերաբերյալը: Այստեղ առկա է քանակային պարտադիր համընկնում: Հասարակ անունները ստեղծվում են վերջավոր կամ անվերջ բազմության բոլոր տարրերը նշանակելու համար, մինչդեռ նրանց խոսքային վերաբերյալը մասնավորված-որոշակիացած է: Այսինքն՝ նշյալի ընդգրկման մի մասն է դառնում վերաբերյալ, կամ, որ նույնն է, նշյալը բոլոր վերաբերյալների համախումբն է:

Այս քանակային անհամաչափությունը վերանում է նաև վերը նշվածին հակադիր եզրային դեպքում, երբ խոսվում է ամբողջ բազմության մասին, և վերաբերյալն ընդգրկում է ամբողջ նշյալը. կարելի է ասել, որ որպես տեսակի անվանում կիրառվող հասարակ անունը հանդես է գալիս որպես այդ տեսակի յուրօրինակ հատուկ անուն: Այդ-

²³ Куайн У. В. О. Слово и объект. М.: Логос; Праксис, 2000, с. 69.

պիսի դեպքերում եզակի թվով հասարակ անունը՝ տեսակի անվանումը, կարող է փոխարինվել բազմության տարրն անվանող միևնույն հասարակ անվան հոգնակի թվով՝ ստանալով նաև քանակային որոշարկիչ, ինչպես *Մոլորակը որևէ աստղի շուրջը պտտվող երկնային մարմին է = Բոլոր մոլորակները որևէ աստղի շուրջը պտտվող երկնային մարմիններ են*: Մյուս կողմից՝ կարծիք կա, որ «Մա Սոկրատեսն է», «Մա Պեգասն է» դատողություններում «Սոկրատես», «Պեգաս» մասնավոր տերմինները, հանդես գալով ընդհանուր տերմիններին հատուկ ստորոգելիական դիրքում, սկսում են հատկանիշ նշանակել և այդպիսով վերածվում են ընդհանուր տերմինի²⁴: Այսպիսով՝ ընդհանրական անվանումների և հատուկ անունների գերիշխող հատկանիշների կողքին այս բառատեսակներից յուրաքանչյուրը սահմանային կիրառություններում նաև մյուսի հատկանիշներն է դրսևորում:

Ցուցական բառերի ամենաբնորոշ նմուշները ցուցական դերանուններն են: Դերանունների ավանդական «տեքստաբանական»²⁵ սահմանման և անվանման հիմքում դրված է տեքստում նրանց հարակրկնական դերը: Քանի որ այդ սահմանումը որևէ կերպ չի կապվում լեզվի և արտալեզվական իրականության հարաբերակցության մեջ դերանունների տեղի հետ, բնականաբար, վաղ թե ուշ դերանվան ըմբռնման վերանայման և նրա իմաստաբանական բնութագրման փորձեր պիտի արվեին: Լեզվական փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ դեպքերում անգամ փոխարինում պատկերացնելն անհնար է²⁶, հետևաբար անունը և դերանունը կոչված են տարբեր գործառույթներ իրականացնելու: Ի վերջո հաստատվում է, որ դերանուններին բնորոշ են և՛ ներտեքստային կապերը ցույց տալու, և՛ արտալեզվական իրականությունն արտացոլելու գործառույթները. «... ամեն մի լեզվում այդ բառերը կազմում են երկու առանձնահատուկ համակարգ՝ ցուցական դերանունների համակարգը լեզվական հաղորդակցման տիպական իրադրության սահմաններում և ցուցական դերանունների համակարգը տեքստի սահմաններում»²⁷: Ցուցական բառերի արտալեզվական և տեքստային վերաբերությունները (դրանցով իրականացվող լեզվական և մակալեզվական առկայացումները) հստակ սահմանազատելի են, ուստի դրանց զուգահեռ գոյությունը որպես այդ բառերի իմաստային անհատակություն ներկայացնելը²⁸ տեղին չէ:

Դերանունները որպես երկրորդ կարգի բառեր բնութագրելն անընդունելի համարողները երբեմն անգամ անունը ստորադասում են դե-

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 207:

²⁵ **Ս. Գ. Աբրահամյան**, Արդի հայերենի դերանունները, Եր., ՀՄՍՌ ԳԱ հրատ., 1956, էջ 12:

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 26-33:

²⁷ **Милевский Т.** Предпосылки типологического языкознания // Исследования по структурной типологии. М.: Изд-во АН СССР, 1963, с. 23.

²⁸ Տե՛ս **Кравченко А. В.** Вопросы теории указательности: Эгоцентричность. Дейкитичность. Индексальность. Иркутск: Изд-во Иркут. ун-та, 1992, էջ 55-59:

րանվանը: Խոսքի և իրադրության հարաբերակցումը որոշակիացնելու կարողության տեսանկյունից անունը համարվում է «դերանվան անկատար փոխարինիչ»²⁹, բնորոշվում է որպես «դերդերանուն»³⁰:

Դերանունների՝ այլ խոսքի մասերին իրենց նշյալով հարաբերակից լինելը ևս մեկ անգամ հաստատում է, որ նրանց յուրահատկությունը ոչ թե նշանակվող իրողությունների, այլ նշանակման եղանակի մեջ է, որով դերանունները տարբերվում են ինչպես ընդհանրական անվանումներից, այնպես էլ հատուկ անուններից: Անունների և ցուցական դերանունների գործածումը երկու գուգահեռաբար հնարավոր և հավասարաբաժեք մարտավարություններ են, որոնց միջև ընտրություն է կատարվում՝ ըստ տվյալ իրադրության մեջ խոսողի հաղորդակցական նպատակադրման³¹:

Դերանունների առանձնահատկությունը՝ անվանելու փոխարեն մատնանշելը, ակնհայտորեն դրսևորվում է հատկապես ցուցական և անձնական դերանուններում: Դրանց ավելանում են տարածաժամանակային կողորդինաստներ ձևավորող մակբայներ և ցուցականության տարբեր երանգներ դրսևորող եղանակավորիչներ (վերաբերականներ):

Ցուցական բառերը անխզելիորեն կապված են խոսքի իրադրության և խոսողի հետ. դրանց բովանդակությունը բացարձակ իրադրական կապվածություն ու կախվածություն ունի և առարկայորեն կարող է պատկերացվել միայն որպես անհամար վերաբերյալների թվարկում: Այդ թվարկումն էլ հենց ցուցական բառի նշյալն է. ցուցական բառերի դիտարկումից «... երևում է, որ զգայական հավաստիության դիալեկտիկան այլ բան չէ, քան այդ հավաստիության կամ նրա փորձառության շարժընթացի պարզ պատմություն, և որ զգայական հավաստիությունն ինքը այլ բան չէ, քան միայն այդ պատմությունը»³²: Ցուցական բառերում, ինչպես որ հատուկ անուններում, նշյալի և վերաբերյալների ընդգրկումները քանակային հավասարություն ունեն: Դրանով էլ այս երկու բառատեսակները տարբերվում են ընդհանրական անվանումներից, որոնցում այդպիսի համընկնումը հազվադեպ պատահականություն է: Սակայն հավասարության աղբյուրները տարբեր են: Հատուկ անուններն ունեն որոշակի նշյալ, և վերաբերյալն է նրան համապատաս-

²⁹ Пирс Ч. С. Избранные философские произведения. М.: Логос, 2000, с. 209.

³⁰ Quine W. V. O. From a Logical Point of View. N. Y.: Harper & Row, 1963, p. 13. Ի դեպ, Ու. Վ. Օ. Քուայնի գրքի ռուսերեն հրատարակության թարգմանիչը, «pronoun (դերդերանուն)»-ը թարգմանելով «протоместоимение (նախադերանուն)» (Куайн У. В. О. С точки зрения логики. Томск: Изд-во Том. ун-та, 2003, с. 17), ոչ թե պարզապես հեռացել է հեղինակի մտքից, այլ տրամագծորեն շրջել է այն՝ անունը դարձյալ դերանունից առաջ տեղադրելով և դրանով իսկ փաստորեն վերադառնալով դերանվան ավանդական ըմբռնմանը, որի դեմ ընդվզում է Քուայնը:

³¹ Տե՛ս Ս. Գ. Հովհաննիսյան, Ցուցական դերանունը որպես տարածության նշանակիչ // Ձեկուցումների դրույթներ (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Գ. Մբրահամյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի), Եր., Ասողիկ, 2015, էջ 34-35:

³² Гегель Г. В. Ф. Феноменология духа. М.: Академический Проект, 2008, էջ 109:

խանեցվում: Ցուցական բառերում, ընդհակառակը, որոշիչը վերաբերյալն է, իսկ նշյալը պայմանավորված է նրանով: Այլ կերպ ասած՝ հատուկ անուններն իրենց լեզվականորեն հաստատված առարկայական կապվածությամբ են մտնում խոսքի մեջ, մինչդեռ ցուցական բառերի խոսքային առարկայական կապվածությունն է հիմք դառնում լեզվականի ընդգրկման համար:

Ցուցական բառի նշանակյալը տարբերվում է դասական հասկացությունից: Իրողության բոլոր հատկանիշներից այն ներառում է միայն նրա կապերը խոսքային իրադրության, հաղորդակցման ընթացքի և մասնակիցների հետ, սահմանում է, թե հաղորդակցական կոորդինատային համակարգում ինչ դիրք կարող է գրավել վերաբերյալը. վերաբերյալը հավասարեցվում է տվյալ դիրքում գտնվող կետի, անտեսվում են նրա բոլոր անհատական և դասային հատկանիշները, նկատի են առնվում միայն և միայն նրա կոորդինատները: Այսպիսի նշանակյալը վերաբերությունը որոշելու կանոն է՝ վերաբերական սխեմա, իրադրության վրա որի վերադրումով կարող է ճանաչվել վերաբերյալը:

Եթե հատուկ անուններում և ընդհանրական անվանումներում կենտրոնացած են համապատասխանաբար մասնավորի և ընդհանրի բևեռները, ապա ցուցական բառերն այդպիսի բևեռացում չունեն և հակառակ եզրերի ուրույն գուգակցում են ներկայացնում. դրանք իրենց բովանդակությամբ ամենաընդհանուրն են լեզվում և ամենամասնավորը խոսքում:

Դիտարկված երեք բառատեսակներից ընդհանրական անվանումները միջին դիրք են գրավում մյուս երկուսի միջև՝ իրենց մի հատկանիշով նման լինելով մեկին, մեկ այլ հատկանիշով՝ մյուսին: Հատուկ անունների հետ նրանց ընդհանրացնում է անվանողական արժեքը: Ցուցական բառերի հետ նրանց ընդհանրացնում է նշյալի (հնարավոր վերաբերյալների) բազմակիությունը: Ընդհանրական անվանումները բացառիկ դեր ունեն իրականության մտավոր արտացոլման մեջ: Եզրային բառատեսակների՝ հատուկ անունների և ցուցական բառերի ընդհանրությունը նրանցով առկայացվող վերաբերյալի եզակիության մեջ է: Նրանք վերաբերական նույնականացման միջոցներ են և ծառայում են իրադրության բաղադրիչների խոսքային անհատականացմանը: Այդ գործառույթը նրանք կատարում են տարբեր ձևերով, բայց հավասար հաջողությամբ. հենց այդ փաստն է արտացոլված ենթադրությունների (սուպրադիցիաների) միջնադարյան տեսության մեջ, որի համաձայն՝ հատուկ անունը և ցուցական դերանունը ենթադրությի միևնույն տեսակի ձևավորման միջոցներ են³³:

Բառատեսակներից որևէ մեկը թերագնահատելը և գերագնահատելը հավասարապես անցանկալի են. դրանից խուսափելու համար

³³ Ст' u **ОКРАМ** У. Избранное. М.: Едиториал УРСС, 2002, էջ 38-39:

փորձենք պատկերացնել, թե ինչպիսին կլինեն դրանցից միայն մեկն ունեցող ու մյուսը բացառող լեզուն³⁴: Մի դեպքում կարելի է պատկերացնել մի համալիր՝ վրան ցուցանակ՝ «Պատկերասրահ»: Համալիրի երեք մասնաշենքերից առաջինի հսկայական, երբեմն հայացքով անընդգրկելի սրահներից ամեն մեկում պատերին կախված են միևնույն նկարի բյուրավոր էսքիզներ, սրահների մի մասում շրջանակի մեջ նկարի փոխարեն տեքստ է դրված: Երկրորդ մասնաշենքի սրահներն ավելի փոքր չափեր ունեն, և նրանցից ամեն մեկը հատկացված է միայն մեկ նկարի: Երկու մեծածավալ մասնաշենքերի միջև ծվարել է մի փոքրիկ շինություն՝ մի պատով՝ մեկին, մի պատով էլ մյուսին կոթնած: Այս մասնաշենքում սրահների պատերին դարձյալ շատ շրջանակներ են կախված, բայց ամեն մի սրահի շրջանակներից միայն մեկում նկար կա, իսկ մյուսները դատարկ են: Մասնաշենքերը և նրանց սրահները կապված են իրար հետ, կարելի է մեկից մյուսն անցնել, բայց այնտեղից դուրս բերող միջանցք չկա. պատկերասրահը՝ իր բոլոր մասնաշենքերով, արտաքին աշխարհից մեկուսացած է մի անդուռ ու անպատուհան պարսպով, ոչ ոք չգիտի, թե որտեղ պետք է փնտրել այն, ինչին համապատասխանում են նկարները (և ընդհանրապես համապատասխանում են արդյոք որևէ բանի), և պարսպի երկու կողմերի աշխարհներն ապրում են ամեն մեկն իր կյանքով, մեկը մյուսին անհաղորդ: Մյուս դեպքում պատի վրա գրված է. «Ցուցասրահ», և գծված են տարբեր ուղղություններ ցույց տվող սլաքներ: Բազմաթիվ մուտքերից սկիզբ առնող ուղիղ կամ ոլորապտույտ, միագիծ կամ խաչվող միջանցքները, սակայն, ոչ մի տեղ չեն տանում, ոչ մի ցուցասրահ էլ չեն հասցնում: Այդ միջանցքների ցանցով դեգերելուց հետո հնարավոր է դուրս գալ բազմաթիվ ելքերից մեկով՝ լավագույն դեպքում հայտնվելով այնտեղ, որտեղից մտել ես:

Մեր բախտը բերել է, որ նկարագրված երկու իրադրություններն էլ ընդամենը երևակայության խաղ են, լեզվում կան բառերի բոլոր տեսակները, ամեն տեղ հասնելու ճանապարհ կա, և ամեն մի ճանապարհ մի տեղ հասցնում է: Դրա շնորհիվ մենք ունենք նշանների այնպիսի համակարգ, որը կիրառելի է աշխարհի նկատմամբ: Անվանողական արժեք ունեցող բառերը կարող են նշանակել մտքի ամեն մի առարկա՝ և՛ իրականը, և՛ երևակայականը, մինչդեռ ցուցական բառերն իրենց զուտ իրադրական իմաստավորման հետևանքով կարող են նշանակել միայն իրականության մեջ եղածը (կենտավրոսին հնարավոր է անվանել, բայց հնարավոր չէ ցույց տալ): Այս կիրառական սահմանափակու-

³⁴ «Էպոքեն»՝ վերառումը, ճանաչողական հնարի կարգավիճակ է ստացել Է. Հուսեյնի ճանաչողության տեսության մեջ (տե՛ս Гуссерль Э. Идеи к чистой феноменологии и феноменологической философии. Кн. 1. М.: Академический Проект, 2009, էջ 97-101): Այդ հնարի հետևողական կիրառումը կարող է դրվել մի ամբողջ ուսումնասիրության կառուցման հիմքում (տե՛ս, օր., Է. Աթայան, Նշան և նշանայնություն // Է. Աթայան, Հոգի և ազատություն, Եր., Սարգիս Խաչենց, 2005, էջ 298-322):

մը հատուցվում է ներտեքստային մատնանշման կարողությամբ. ցուցական բառերը կարող են հղել իրականության տարբեր տեսակների՝ օբյեկտիվ իրականությանը և տեքստային իրականությանը, ընդ որում վերջին դեպքում այդ բառերը ներկայանում են որպես իրենց մատնանշման գործառույթը սովորականի նման ջանասիրաբար կատարողներ, և *ճշմարիտ – կեղծ* երկրնտրանքի լուծման ամբողջ պատասխանատվությունն ընկնում է տեքստի վրա:

Բանալի բառեր – *նշանակյալ, նշյալ, վերաբերյալ, անվանում, մատնանշում, հատուկ անուն, ընդհանրական անվանում, ցուցական բառ*

АШОТ АБРААМЯН – Слова и вещи. – Лексическими воплощениями основных стратегических приемов языковой репрезентации действительности – именованями и указаниями – являются номинативные и дейктические слова; в число номинативных слов входят общие названия и собственные имена. Полученные таким образом три типа слов часто упоминаются как средства идентификации референта и просто перечисляются, при этом не приводятся обоснования наличия именно этих типов. Между тем анализ показывает, что они составляют стройную систему, части которой можно определять и сравнивать, используя количественные характеристики. Именно благодаря существованию этих трех семантико-функциональных типов слов становятся возможными полный семантический охват действительности и полная референциальная идентификация компонентов речи.

Ключевые слова: *сигнификат, денотат, референт, номинация, дейксис, собственное имя, общее название, указательное слово*

ASHOT ABRAHAMYAN – Words and Things. – The main strategic modes of linguistic representation of reality – nomination and deixis – are embodied by nominative and deictic words, nominative words including common names and proper names. The three types of words, distinguished in this way, are often mentioned as means of identification of the referent and are simply enumerated, without substantiating the existence of precisely these types. Meanwhile, the analysis proves that they constitute a regular system, parts of which can be defined and compared with each other, using quantitative characteristics. It is owing to the existence of these three semantic-functional types of words that full semantic coverage of reality and full referential identification of speech components become possible.

Key words: *significat, denotation, referent, nomination, deixis, proper name, common name, deictic word*